Ձև N 2
Շրջակա միջավայրի նախարարություն

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շրջակա միջավայրի նախարարություն

N N	**Նպատակ**	**Միջոցառումներ**	**Միջոցառումների իրականացման արդյունքները**	**Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները**	**ծանոթագրություն**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը,	1. Սևանի, Հրազդանի ջրավազանային տարածքների կառավարման պլանների մշակում և Կառավարության որոշման նախագծերը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1909-Ն և N 1912-Ն որոշումներով հաստատվել են Հրազդանի և Սևանի ջրավազանային կառավարման տարածքների 2022-2027 թվականների կառավարման պլանները:		2022թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ
		2. Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի պլանի մշակման աշխատանքներն իրականացվելու են «ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար. ջրային ռեսուրսներ և շրջակա միջավայրի տվյալներ» ծրագրի շրջանակներում՝ 2022-2024թթ ընթացքում: Պլանի մշակման համար հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել ՀՀ ԳԱԱ Ա.Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը:		2021-2026թթ.

	Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը.	3. Արարատյան դաշտի գյուղատնտեսական և ձկնաբուծական, ջրօգտագործողների մոտ ավտոմատ կառավարման առցանց ջրաչափական համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում	Արարատյան դաշտում գործող ձկնաբուծական տնտեսություններում տեղադրվել և կնքվել են 17 առցանց ջրաչափական սարքավորումներ:		2021-2026թթ.
		4. «Արտադրական կեղտաջրերի նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Միջոցառմամբ նախատեսված Կառավարության որոշման նախագիծը չի մշակվել սահմանված ժամկետներում:	Սույն միջոցառման համար ժամկետ է սահմանվել հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 589-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետը, սակայն համաձայն 2018 թվականի մարտի 2-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-126-Ն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի՝ նախնական մաքրում իրականացնելու պահանջն ուժի մեջ է մտնում 2025 թվականի	2022թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ *(Կառավարության 2022թ. դեկտեմբերի 22-ի N 2117-Լ որոշմամբ միջոցառման կատարման ժամկետ է սահմանվել 2025 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակը:)*

				հունվարի 1-ից:	
		6. «ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Ընդունվել է 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենքը		2022 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ
	2.Սևանա լճի էկոհամակարգայի ն հավասարակշռությ ան և կենսաբազմազան ության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը.	1.Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում	Շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքներ չեն իրականցվել,	Աշխատանքներ չեն իրականցվել քանի, որ ձեռք բերված մեքենամեխանիզմները 2021թ. նոյեմբերի 15-ից ներգրավված են եղել «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի Վարդենիկ տեղամասում սկսված ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման աշխատանքներում:	2022թ. և շարունակակ ան
		2.Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	2022 թվականի ընթացքում Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացման շրջանակներում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցով Մարտունու մասնաճյուղի Վարդենիկ տեղամասում մաքրվել և կատարողական ակտով հանձնվել է 22,86 հա տարածք: Շուրջ 28.02 հա տարածք մաքրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի Վարդենիկ և Ծովինար տեղամասերում, սակայն դեռևս համապատասխան կատարողական ակտով ընդունված չեն՝ իրականացվում են փաստագրման և չափագրման		2022 թ. և շարունակակ ան

			աշխատանքներ: Միջոցառման իրականացման նպատակով 2022 թվականի փետրվարի 4-ին հայտարարված բաց մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել և գնման ընթացակարգը 2022 թ. ապրիլի 21-ին հայտարարվել է չկայացած: Մինչև օրս, մաքրման աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսացել 2019-2021 թվականների համար նախատեսված շրջակա միջավայրի նախարարության «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը, և հաշվի առնելով նախորդ տարիներին կատարված մաքրման աշխատանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև այդ փաստաթղթերի ժամանակավրեպ լինելու հանգամանքը, անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման համար անտառների գույքագրման խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ նոր նախագծային աշխատանքներ: Այդ նպատակով շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել և 2022 թվականի մայիսի 16-ին, հայտարարել է գնման մրցույթ, ինչի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության գնային առաջարկը կազմել է 48800.0 հազար դրամ: Պայմանագիրը կնքվել է 2022 թվականի հունիսի 8-ին: Հստակ գնահատում և հետագա աշխատանքների մասով արդյունավետություն ապահովելու նպատակով 2022 թվականի համար հատկացված գումարի շրջանակներում իրականացվել է բյուջետային վերաբաշխում՝ նոր նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով և ընդունվել է 2022 թվականի հուլիսի 28-ի N1169 որոշումը: Կնքված պայմանագրի շրջանակներում՝		

			դեկտեմբերի 28-ին «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ն ներկայացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ, որի հիման վրա հստակեցվել են մաքրման ենթակա տարածքները, մաքրման աշխատանքների համար պահանջվող ֆինանսական միջոցները, ինչն էլ իր հերթին կնպաստի անտառմաքրման համար հատկացվող ֆինանսական միջոցների վերաբաշխման և կիրառման արդյունավետության բարձրացմանը:		
		4. Սևանա լճի ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների համար տեխնիկայի ձեռքբերում	Եվրոմիության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU-4 Sevan» ծրագրի շրջանակում՝ ձեռք է բերվել մեկ միավոր տեխնիկա (անվավոր ամբարձիչ), որը ս.թ. փետրվարի 25-ին հանձնվել է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին: Հանձնման ընթացքում իրականացվել է նաև օգտագործողների դասընթաց, ինչը միտված է լճի ջրի մակարդակի բարձրացման արդյունքում հեղեղված ափամերձ տարածքի մաքրման համար «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարողությունների հզորացմանը: Ներկայումս տեխնիկան ներգրավված է մաքրման աշխատանքներում:		2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ և շարունակական

	3.Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը.	1. Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար անտառաշինական նախագծերի (անտառկառավարման պլանների) մշակում և հաստատում նախարարի հրամանով	Մշակվել են շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 4 «անտառտնտեսություն» մասնաճյուղերի (Հրազդանի, Գյումրիի, Վայոց ձորի, Արագածոտնի) անտառակառավարման պլանները, որոնց համար սկսվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը: Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի մայիսի 19-ի №157-Լ հրամանով հաստատվել են անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Սիսիանի և Ճամբարակի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառակառավարման պլանները և 2022 թվականի սեպտեմբերի 28-ի №337-Լ հրամանով հաստատվել է անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառակառավարման պլանը		2022-2023թթ.
		2. Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում	Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև 2022 թվականի ապրիլի 15-ին կնքված անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի շրջանակներում իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում 130 հա, կոճղաշիվային վերաճի օժանդակում 77 հա, տնկարանի հիմնում 5.0 հա, փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում 250000 հատ: 2022 թվականի գարնանը և աշնանը շուրջ 30 հա տարածքում իրականացվել է համապետական ծառատունկ, որի շրջանակներում տնկվել է շուրջ 75000 ծառ:		2021-2026թ.թ.
		3. Անտառների կառավարման ոլորտում	«Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ		2021-

		անտառպահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում	հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագրի շրջանակներում Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 3 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում (Հրազդանի, Սիսիանի, Տաշիրի) հիմնադրվել է 6 հատ (յուրաքանչյուրը 500 քմ մակերեսով) ժամանակակից ջերմոց: Փայտանյութի վերամշակումն անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացնելու նպատակով «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղում հիմնվել է տեխնիկապես հագեցած նոր սղոցարան:		2026թ.թ.
		4. Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության նպատակով անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների իրականացում, վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի իրականացման կազմակերպում,	2022 թվականի հունիս ամսին Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Արագածոտնի, Հրազդանի և Վայոց ձորի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի 4440 հա անտառներում վնասատուների դեմ կատարվել են ավիացիոն-քիմիական պայքարի աշխատանքներ		2021-2026թ.թ.
		5. Անտառային կադաստրի վարում	Իրականացվել է անտառների կադաստրի վարման ծրագրի փորձարկում		2021-2026թ.թ.
		7. Անտառային կոմիտեում անտառների պահպանության գործընթացի արդյունավետության	Անտառների պահպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել և շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի N1/17.1/14356 գրությամբ Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության անտառային ծառայության մասին»		2021-2022թթ.

		բարձրացում	օրենքի նախագիծը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շուրջօրյա հսկաղություն անհրաժեշտ է իրականացնել ինչպես անտառներում, այնպես էլ բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաև կրկնվող գործառույթները բացառելու նպատակով, շրջակա միջավայրի նախարարությունը 2022 թվականի դեկտեմբերի 1-ի №1/17.1/15394 գրությամբ դիմել է վարչապետի աշխատակազմ վերը նշված օրենքի նախագիծը շրջանառությունից հանելու նպատակով: Նախատեսվում է վերոնշյալ ոլորտում իրականացնել բարեփոխում՝ մշակելով «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ծառայության մասին» օրենքի նոր նախագիծ, որով կնախատեսվի բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումն իրականացնող ՊՈԱԿ-ների և անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի պահպանություն իրականացնող աշխատակիցների հաստիքների միասնական կառավարում ընդհանուր ծառայության միջոցով, որը կապահովի տարածքների անընդմեջ հսկողությունը և կնպաստի խախտման դեպքերի ժամանակին հայտնաբերմանն ու կանխարգելմանը: Կառավարության 2022թ. դեկտեմբերի 22-ի N 2117-Լ որոշմամբ միջոցառման կատարման ժամկետ է սահմանվել 2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակը:		
	4.Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետությ	3.«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» նոր օրենքի նախագիծը 2022 թվականի հունիսի 8-ի N1/16.9/8884 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:		2022թ. հունիսի 2-րդ տասնօրյակ

	ան բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը				
	5.Կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը.	4.ՀՀ տարածքում հանդիպող արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և պաշարների գնահատման աշխատանքների իրականացում	2022 թվականի օգոստոսի 16-ին և սեպտեմբերի 16-ին շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիպող արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և պաշարների գնահատման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է համապատասխանաբար ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/04 և ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/02 ծածկագրերով մրցույթներ: Մրցույթների արդյունքում ոչ մի հայտ չի ներկայացվել, ուստի վերոնշյալ աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում է անցկացնել նոր մրցույթ:		2022-2024թթ.
		5. Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում	2022 թվականի օգոստոսի 16-ին շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/04 ծածկագրով մրցույթ: Մրցույթի արդյունքում վերոնշյալ աշխատանքների իրականացման համար հայտ ներկայացրած կազմակերպություններից գնահատող հանձնաժողովի կողմից ընտրվել է «Գեոմափիս» ՍՊ ընկերությունը: 2022թ. սեպտեմբերի 16-ին շրջակա միջավայրի նախարարության և «Գեոմափիս» ՍՊԸ-ի միջև սահմանված կարգով կնքվել է պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման N«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-22/04»		2022-2024թթ.

			ծածկագրով հաստատված պայմանագիր: Համաձայն պայմանագրի Կատարողի («Գեոմափիս» ՍՊԸ) կատարման ենթակա աշխատանքի արժեքը կազմում է 61500.0 հազ.դրամ և պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությամբ մշակվել է ծրագրային հայեցակարգ և ներկայացվել է 12 դոնոր կազմակերպությունների: Շարունակվում է շահագրգիռ դոնոր կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ աշխատանքները:		
	6.Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողական ության և մեղմման գործողությունների իրականացումը.	3. «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ (մինչև 2050 թվականը) ցածր ածխածնային զարգացման ռազմավարութունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Մշակվել և վերստին նախարարության ստորաբաժանումների կարծիքի է ներկայացվել «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ (մինչև 2050 թվականը) ցածր ածխածնային զարգացման ռազմավարութունը հաստատելու մասին» Կառավարության որոշման լրամշակված նախագիծը:	Միջոցառման կատարման ժամկետի խախտման պատճառ է հանդիսացել մասնագիտական խորհրդատվական կազմակերպության ընտրության և պայմանագրի կնքման գործընթացի ձգձգումը:	2022թ. հունիսի 2-րդ տասնօրյակ *(Միջոցառման կատարումը նախատեսվում է 2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակում)*
		5. «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի	Ընդունվել է Կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N1692-Լ որոշումը:		2022 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ

		աշխատակազմ ներկայացնելը			
		6. «Արթիկ քաղաքի փակ քարհանքի թափոնների և ջրհեղեղների կառավարում» ծրագրի իրականացում	Ծրագրով նախատեսված աշխատանքներն ամբողջովին ավարտված են, ինչի մասին ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է վարչապետի աշխատակազմ 2022 թվականի հուլիսի 28-ի N1/27.1/11017 գրությամբ:		2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ
		7.«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի իրականացում	Մշակվել են՝ • Էներգակիրների և ցանցային էլեկտրաէներգիայի արտանետումների գործակիցների սահմանման վերաբերյալ նորմատիվատեխնիկական փաստաթղթեր, • հաշվարկային TIER 1 մոտեցման հիման վրա էներգախնայողության հաշվարկի համար հավաստագրման և հաշվարկման արձանագրություն, • ՀՀ նորակառույց շենքերի ՇԷԲ սերտիֆիկատի ձևանմուշ, • հաշվարկային TIER 2 մոտեցման հիման վրա էներգախնայողության հաշվարկի համար հավաստագրման և հաշվարկման արձանագրություն, • գիտելիքների կառավարման պլան, • հաղորդակցության պլան, o Շենքերի տարբեր կատեգորիաների համար մոնիթորինգի, հաշվետվողականության և ստուգման շրջանակի, այդ թվում՝ ուղեցույցների և մոնիտորինգի մեթոդաբանություն: Շարունակվող աշխատանքներ. • Ընտրված շենքերի էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում, էներգիայի սպառման վերաբերյալ տվյալների հավաքագրում, • Վերանորոգման համար ընտրված շենքերից վիճակագրական և դինամիկ տվյալների հավաքագում, • Առաջնային էներգիայի գործակիցների կարգի		2021-2023թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

			սահմանման վերաբերյալ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում, • շենքերի էներգաարդյունավետության բարձրացման (ՇԷԲ) օրենսդրության և շենքերում չափողականության, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) շրջանակի վերլուծություն, նորմատիվ ակտերի ցանկի մշակում:		
		8.«Անցում էլեկտրական շարժիչով մեքենաների Հայաստանում» ծրագրի իրականացում	Ավարտված աշխատանքներ. • Մեկնարկային աշխատաժողովի և կառավարման խորհրդի անդրանիկ նիստի անցկացում, • Հարցում պետական գերատեսչությունների շրջանում՝ վերապատրաստման ծրագրի շահագրգիռ կողմերին թիրախավորելու նպատակով, • Էլեկտրական մեքենաների և լիցքավորման կայանների տեխնիկական բնութագրերի մշակում, • Կարողությունների գնահատման հաշվետվության կազմում և շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացման ծրագրի մշակում, • Այլ երկրների կողմից ընդունված ազգային էլեկտրական շարժունակության լավագույն փորձի վերլուծություն (ներառյալ՝ մարտկոցների թափոնների կառավարումը, գենդերային վերլուծությունը և գործողությունների պլանը), • Հայաստանում լավագույն փորձի վերարտադրման հնարավորությունների գնահատում (ներառյալ՝ նպաստող և սահմանափակող գործոնները) և համապատասխան առաջարկություններ պարունակող հաշվետվության մշակում, • Լիցքավորման ենթակառուցվածքի հնարավոր կարիքների վերլուծության, ինչպես նաև էլեկտրաէներգիայի պահանջարկի կառավարման, ցանցի և մատակարարման որակի գնահատման հաշվետվության մշակում, • Գենդերային խնդիրների վերլուծություն պարունակող հաշվետվության կազմում և ներառում		2021-2023թ.թ.

			ռազմավարության նախագծի կազմում, • Էլեկտրական շարժունակության ազգային վերապատրաստման դասընթացի անցկացնում Գյումրիում, • Գնումների ծրագրի համար անհրաժեշտ տեխնիկական, գործառնական, շահագործման և սպասարկման, բնապահպանական և ֆինանսական որակավորումների և ընտրության չափանիշների մշակում, • Էլեկտրական շարժունակության ազգային ռազմավարության մշակում, • Միջգերատեսչական աշխատանքային խմբի 2 հանդիպումների կազմակերպում և իրականացում: Շարունակվող աշխատանքներ. • Միջազգային ֆինանսական կազմակերպությունների (Ասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ) հետ բանակցություններ՝ ծրագիրն ընդլայնելու նպատակով, • ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի ներկայացուցիչների հետ բանակցությունների վարում՝ լիցքավորման կայանների դրամաշնորհի ստացման նպատակով, • Պիլոտային ծրագրի առաջընթացի մշտադիտարկման և գնահատման հիմնական կատարողական ցուցիչների (ֆինանսական ռեսուրսների և էներգիայի խնայողություններ, խոչընդոտներ, մեքենաներն օգտագործողների փորձ (լիցքավորում, սպասարկում և այլն, ներառյալ՝ գենդերային ասպեկտները)) հստակեցում և մշտադիտարկման ու գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեթոդաբանության մշակում:		
		9.«Հայաստանի անտառների կայունություն,	Ավարտված աշխատանքներ. • Սիսիանի Տաշիրի և Հրազդանի		2021-2026թթ.

		հարմարվողականության բարձրացում և համայնքային զարգացման կանաչ աճի խթանում՝ կլիմայի փոփոխության մեղմման միջոցով» ծրագրի իրականացում	անտառտնտեսության տարածքներից յուրաքանչյուրում հիմնվել է երկուական 500քմ ջերմատուն (ընդհանուր 3000քմ) տնկիների աճեցման նպատակով, • Հրազդանի անտառտնտեսության տարածքում տեղադրվել է սերմերի պահպանման սառնարանային խցիկ՝ օդի հարաբերական խոնավության և ջերմաստիճանի կարգավորիչներով, • Փակ արմատային համակարգով տնկիների արտադրության նպատակով գնվել է 30000 հատ սկուտեղ, • Սկուտեղների տեղադրման համար հայտարարվել է տակդիրների (շրջանակ) ձեռքբերման մրցույթ, • Շահառու անտառտնտեսությունների անձնակազմի համար կազմակերպվել է եռօրյա դասընթաց սերմերի հավաքագրման և պահպանման վերաբերյալ:		
		10. «Հայաստանի Հանրապետության արիդ (Վայոց ձորի մարզ) գոտում կլիմայի փոփոխության ընթացքի մեղմում և հարմարվողականության կարողությունների հզորացում» ծրագրի իրականացում	Մշակվել և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներում քննարկվել է Ծրագրային հայտի հայեցակարգը, որն ստացել է դրական կարծիք և նախապատրաստվում է ներկայացման Կանաչ կլիմայի հիմնադրամ:		2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
	7.Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.	2. «ՀՀ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2022-2026 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման	Միջոցառմամբ նախատեսված Կառավարության որոշման նախագիծը չի մշակվել սահմանված ժամկետներում:	Կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակված է, սակայն վարչապետի աշխատակազմ սահմանված կարգով ներկայացնել հնարավոր չէ՝ Նախագծի ընդունման համար օրենքով լիազորող նորմի բացակայության պատճառով: Նախագծի ընդունման լիազորող նորմ նախատեսված է	2022 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ *(Միջոցառման կատարումը նախատեսվում է 2026թ. դեկտեմբերի 3-րդ*

		նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը		սահմանել «Քիմիական նյութերի մասին» օրենքով: «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի №1/09.5/15385 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ պետական մարմինների քննարկմանը: Նախագծի ընդունման լիազորող նորմ նախատեսված է սահմանել «Քիմիական նյութերի մասին» օրենքով, իսկ քիմիական նյութերին առնչվող կարգավորումները պետք է համահունչ լինեն նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2017 թ. մարտի 3-ի թիվ 19 որոշմամբ ընդունված «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգին: «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նպատակն է կանոնակարգել քիմիական արտադրանքի նույնականացման և	*գասնօրյակում)*

				շրջանառության կանոնները, դասակարգմանը, անվտանգությանը և մակնշվածքին (պիտակավորմանը) ներկայացվող պահանջները, նոր քիմիական նյութերի նոտիֆիկացման գործընթացը: Սակայն նշված տեխնիկական կանոնակարգը դեռևս ուժի մեջ չի մտել, քանի որ ԵԱՏՄ շրջանակներում քննարկվում են, և ԵՏՀ կողմից դեռևս հաստատված չեն ԵԱՏՄ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման և վարման կարգը և նոր նյութերի նոտիֆիկացման կարգը:	
		3. Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում	«Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով մշակվել են պետական եկամուտների կոմիտեից ստացված՝ 2015-2020 թվականների ընթացքում ՀՀ ներմուծված և ՀՀ-ից արտահանված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 28 (անօրգանական քիմիական նյութեր) և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 29 (օրգանական քիմիական միացություններ) խմբերին դասվող ապրանքների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված՝ ՀՀ-ում օգտագործվող քիմիական նյութերի վերաբերյալ տվյալները: «Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման ծառայությունների» ձեռքբերման նպատակով 2022 թվականի սեպտեմբեր ամսին կազմակերպվել և անցկացվել է շրջակա միջավայրի նախարարության	Քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում միջոցառումն ուղղված է «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը (ԵԱՏՄ ՏԿ 041/2017) հաստատելու մասին ԵՏՀ խորհրդի 2017թ. մարտի 3-ի N19 որոշման 3-րդ կետի կատարմանը: Սակայն նշված որոշման 2-րդ կետի պայմանն ապահովված չէ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից դեռևս մշակված և հաստատված չեն Եվրասիական	2021-2022թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

			կարիքների համար «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ, ինչին մասնակցություն ցուցաբերած երեք ընկերությունից մեկը մրցույթի արդյունքում ճանաչվել է հաղթող մասնակից, որի հետ կնքվել է պայմանագիր՝ «Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման ծառայությունների» ձեռքբերման աշխատանքների կատարման համար: Հաղթող ճանաչված ընկերության կողմից ծառայությունների կատարման համար պահանջվող գումարը կազմել է 19440.0 հազար դրամ (ներառյալ ԱԱՀ): Ուսումնասիրվում են անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավոր տարբերակները: 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N2117-Լ որոշմամբ կատարվել են փոփոխություններ Կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշման մեջ, որով հստակեցվել են նաև սույն միջոցառման մինչև 2026 թվականն իրականացվելիք աշխատանքները և ներկայացվել հինգ փուլով՝ ըստ տարիների:	տնտեսական միության քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորման և վարման կարգը և նոր քիմիական նյութերի նոտիֆիկացման կարգը: 2022թ. դեկտեմբերի 9-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված և առցանց անցկացված տեսախորհրդակցության ընթացքում ներկայացվել է «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ԵՏՀ խորհրդի 2017 թվականի մարտի 3-ի N19 որոշման մեջ փոփոխություններ կատարելու նախագիծը, ինչով նախատեսվում է փոփոխել ԵԱՏՄ ՏԿ 041/2017 և դրանից բխող իրավական ակտերի, փաստաթղթերի ուժի մեջ մտնելու, ինչպես նաև քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստր ստեղծելու ժամկետները, մասնավորապես. 1) «ԵԱՏՄ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ստեղծման և վարման կարգը», ինչպես նաև միջազգային և միջպետական համապատասխան	

				ստանդարտների ցանկը, որոնք անհրաժեշտ են ԵԱՏՄ ՏԿ 041/2017 սահմանված պահանջների կատարման համար, մշակելու և հաստատելու ժամկետ սահմանել՝ մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը, 2) խնդրել ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարություններին՝ քիմիական նյութերի և խառնուրդների ազգային (ներպետական) ռեեստրների ստեղծումն ապահովել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը՝ քիմիական նյութերի մասով և սկսած 2030 թվականի սեպտեմբերի 1-ից՝ խառնուրդների մասով, 3) «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2026 թվականի սեպտեմբերի 1-ը՝ ԵՏՀ խորհրդի 2017 թվականի մարտի 3-ի N19 որոշման 2-րդ կետով սահմանված միջոցառումների ապահովման դեպքում:	
	8.Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման), կառավարման համակարգի	1. «Սնդիկի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերը վարչապետի	1) 2022 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Սնդիկի մասին» օրենքը: 2) «Հայաստանի Հանրապետությունից արտահանման և Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքների ցանկը սահմանելու մասին»		2021-2022թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ

	կատարելագործումը.	աշխատակազմ ներկայացնելը	Կառավարության որոշման նախագիծը հաստատվել է Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N1825-Ն որոշմամբ: Ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 1-ից, գործելու է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը: 3) «Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման և Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգերը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը հաստատվել է Կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N1808–Ն որոշմամբ: Ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 1-ից, գործելու է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը: 4) Համաձայն Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի N7 հավելվածի 51-րդ կետի՝ Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N1825-Ն և նոյեմբերի 24-ի N1808–Ն որոշումները ներկայացվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:		
		3. «Պոլիքլորացված բիֆենիլների գործածության տեխնիկական պայմանները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Միջոցառմամբ նախատեսված Կառավարության որոշման նախագիծը չի մշակվել սահմանված ժամկետներում:	Կառավարության որոշման նախագիծը մշակման փուլում է, սակայն վարչապետի աշխատակազմ սահմանված կարգով ներկայացնել հնարավոր չէ՝ Նախագծի ընդունման համար օրենքով լիազորող նորմի բացակայության պատճառով, ինչը նախատեսվում էր սահմանել «Քիմիական նյութերի մասին» օրենքով, ինչին սակայն համաձայնություն չի տրվել: Քիմիական նյութերի գործածության կարգավորմանը նպատակաուղղված «Քիմիական նյութերի մասին» օրենքի	2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ *(Միջոցառման կատարումը նախատեսվում է 2024թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակում)*

				նախագիծը շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի №1/09.5/15385 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ պետական մարմինների քննարկմանը: Լիազորող նորմը սահմանող դրույթը ներառվել է «Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում, քանի որ ՊՔԲ պարունակող ապրանքներն ենթակա են հեռացման, որպես վտանգավոր թափոններ: ՀՀ-ում քիմիական նյութերի օրենսդրական կարգավորումները, այդ թվում՝ պոլիքլորացված բիֆենիլների գործածությանն առնչվող, պետք է համահունչ լինեն ինչպես Եվրոպական միության, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության իրավական համապատասխան ակտերով, մասնավորապես՝ «Քիմիական արտադրանքի անվտանգության մասին» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին, որոնք դեռևս ամբողջությամբ սահմանված և ուժի մեջ մտած չեն: Վերը նշված հանգամանքներից ելնելով, նախատեսվում է միջոցառումն իրականացնել օրենքով լիազորող նորմի	

				ընդունումից հետո: Լիազորող նորմ սահմանելու նպատակով մշակված «Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի փաթեթը նախապատրաստվել է ներկայացնելու շահագրգիռ մարմինների քննարկմանը:	
	9.Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների լքված, տիրազուրկ տեղամասերի ռեկուլտիվացիայի իրականացումը.	1. Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում	- Մշակվել և ներկայացվել է Ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի նախագծային փաթեթների մշակման 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի ֆինանսավորման հայտը, ինչը չի բավարարվելլ: Միջոցառման կատարման շրջանակներում՝ - կազմվել են Նազիկ, Ողջի, Փխրուտի, Սոթքի, Դաստակերտի փակված պոչամբարների, Տանձուտի, Ալավերդու (Մադանի), Ախթալայի, Հանքավանի, Կապանի արտադրական լցակույտերի ռեկուլտիվացիայի նախագծանախա-հաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքների ձեռքբերման գնման հայտերը, - շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում» ծրագրով աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է մրցույթ, - արդյունքում՝ երկուսի մասով կնքվել են պայմանագրեր «Գեոսփեյս» ՍՊԸ-ի հետ (Նազիկ փակված պոչամբար) 69 000.0 հազար դրամի և «Քլասթերն» ՍՊԸ-ի հետ՝ (Փխրուտի փակված պոչամբար) 68 900.0 հազար դրամի: - 2023 թվականի պետական բյուջեով հատկացվել են ֆինանսական միջոցներ՝ նշված աշխատանքների		2022-2026թթ.

			կատարման համար, - Ողջիի, Սոթքի, Դաստակերտի փակված պոչամբարների, Տանձուտի, Ալավերդու (Մադանի), Ախթալայի, Հանքավանի, Կապանի արտադրական լցակույտերի ռեկուլտիվացիայի նախագծանախա-հաշվային փաստաթղթերի փաթեթի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-23/01 ծածկագրով բաց մրցույթի բացումը տեղի է ունեցել 23.12.22թ., - մրցույթի արդյունքներով հաղթող են ճանաչվել. 1. «Ինվայըրմենթ գրուպ» ՍՊԸ • Ախթալայի արտադրական լցակույտերի ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 147 000.0 հազար դրամ, • Հանքավանի արտադրական լցակույտերի ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 142 500.0 հազար դրամ, 2. «Գեոմիներալ» ՍՊԸ • Ողջի (Սյունիքի մարզ) փակված պոչամբարի (ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ) ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 156 000.0 հազար դրամ, • Դաստակերտի (Սյունիքի մարզ) փակված պոչամբարի (ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ) ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 72 000.0 հազար դրամ, • Կապանի արտադրական լցակույտերի տեղամասի ընդերքօգտագործման թափոնների ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 162 000.0 հազար դրամ: Միաժամանակ, աշխատանքների կատարման համար ֆինանսավորման հնարավորությունները քննարկվում են նաև միջազգային կառույցների հետ. • Մշակվել է ծրագրային հայեցակարգ և ներկայացվել է 9 դոնոր կազմակերպությունների, • The Environment and Resources Authority-ից		

			ստացվել է պատասխան նամակ, որում պահանջվում է ներկայացնել առավել մանրամասն տեղեկատվություն ծրագրի շրջանակի, աշխատանքի ծավալների, արդյունքների, ֆինանսական օժանդակության գործիքների և բյուջեի վերաբերյալ: Պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է դոնոր կազմակերպությանը,		
	10.Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը.	1. Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում	• Մշակվել և ներկայացվել է ՀՀ տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացման 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ, ինչը չի ֆինանսավորվել: • Միջոցառման կատարման ֆինանսավորման հնարավորությունները քննարկվում են նաև միջազգային կառույցների հետ: • Ընդերքօգտագործման հետևանքով հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման նպատակով «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է. o 5 տեղամասի ընտրություն, քարտեզագրական նյութերի պատրաստում, դաշտային հետազոտական աշխատանքների համար տեղեկատվության հավաքագրում o 5 տեղամասում դաշտային հետազոտական աշխատանքներ, o 5 տեղամասում հողերի նմուշառումներ, o նմուշառված հողի նմուշների լաբորատոր հետազոտություններ o հողի նմուշների լաբորատոր և դաշտային հետազոտություններից ստացված տվյալների վերլուծություն: o հողերի աղտոտվածության աստիճանի գնահատում:		2022-2026թթ.
	11.Մթնոլորտային	1. «Մթնոլորտային օդի	2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունվել է		2022 թ.

	օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը	պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-522-Ն)		մարտի 3-րդ տասնօրյակ
	13.Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության	1.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Մշակվել և 2022 թվականի օգոստոսի 5-ի N 1/01.6/4815 գրությամբ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերի փաթեթը բազմիցս քննարկվել է տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստերին: 2022 թվականի դեկտեմբերի 21-ին կայացած տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի ՆԿԱ/377 արձանագրության 2-րդ կետի համաձայն նախագծերի փաթեթն աշխատանքային կարգով լրացուցիչ քննարկվել է վարչապետի աշխատակազմի	Սահմանված ժամկետի խախտման պատճառ է հանդիսացել Նախագծի քննարկման հետ կապված խնդիրները. 1. e-draft հարթակում տեղադրելուց հետո ստացվել է բացասական հանրային արձագանք և անհրաժեշտություն է առաջացել կազմակերպել նոր հանրային քննարկումներ, 2. կրկին քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ, 3. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Նախագծի վերաբերյալ ստացվել է բացասական դիրքորոշում, և անհրաժեշտություն է առաջացել Նախագիծը ևս մեկ անգամ աշխատանքային կարգով քննարկել ՏԿԵՆ համապատասխան ներկայացուցիչների հետ՝	2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ

	համակարգի բարելավումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ		իրավաբանական վարչության հետ, ինչպես նաև աշխատանքային կարգով տրամադրվել է Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովին:	ընդհանուր դիրքորոշում ձևավորելու նպատակով:	
		2.«Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Միջոցառմամբ նախատեսված Կառավարության որոշման նախագիծը չի մշակվել սահմանված ժամկետներում:	Սահմանված ժամկետում չկատարման պատճառ է հանդիսացել նախագծի ընդունման համար օրենքով լիազորող նորմի բացակայությունը: Լիազորող նորմը նախատեսվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքում, որը ներկայումս շրջանառվում է:	2022թ. հունիսի 1-ին տասնօրյակ *(Միջոցառման կատարումը նախատեսվում է 2024թ. մարտի 3-րդ տասնօրյակում)*
		3.«Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Միջոցառմամբ նախատեսված Կառավարության որոշման նախագիծը չի մշակվել սահմանված ժամկետներում:	Սահմանված ժամկետում չկատարման պատճառ է հանդիսացել նախագծի ընդունման համար օրենքով լիազորող նորմի բացակայությունը: Լիազորող նորմը նախատեսվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ	2022թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ *(Միջոցառման կատարումը նախատեսվում է 2024թ.*

				օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքում, որը ներկայումս շրջանառվում է:	*հունիսի 3-րդ տասնօրյակում)*
		7. Շրջակա միջավայրի նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվություններ տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում	Շրջակա միջավայրի նախարարությունը պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ, իրականացրել է թույլատվական փաստաթղթերն էլեկտրոնային համակարգի միջոցով տրամադրելու գործընթացը, որի արդյունքում 2022 թվականի հուլիսի 25-ից ներդրվել և հասանելի է «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) էլեկտրոնային համակարգը, ինչի մասին հայտարարություն է զետեղվել շրջակա միջավայրի նախարարության env.am կայքում http://www.env.am/news/one_window-26-07-2022 հղումով և ֆեյսբուք սոց. ցանցում: Մինչ օրս էլեկտրոնային համակարգի միջոցով արդեն իսկ ստացված 71 հայտից տրամադրվել է 34 լիցենզիա և 37 պարզաբանում: Գործընթացի իրականացման շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 80 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի, շրջակա միջավայրի նախարարության կողմից համակարգվող ոլորտներում ներառված ապրանքների ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի հստակեցման նպատակով, մշակվել և ընդունվել է Կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N90-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N473-Ն որոշումը:		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

			Մշակվել և 2022 թվականի նոյեմբերի 28-ի N1/01.4/15259 գրությամբ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Կառավարության 2021 թվականի հունիսի 10-ի N 977-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով հստակեցվում են փայտանյութի արտահանման թույլատվական փաստաթղթերի տրամադրման դրույթները:		
	16.Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին հասարակության իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարական տեխնոլոգիաների դերի բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն	1. «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը լրամշակվել է արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության հիման վրա 04.10.2022թ. N1/01.4/13177 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է վարչապետի աշխատակազմ: Ներկայումս վարչապետի աշխատակազմից 26.10.2022թ. N 02/12.10/35126 գրությամբ ստացված Վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների եզրակացությունների հիման վրա նախագծերի լրամշակված տարբերակը 16.11.2022թ. N1/01.7/14797 գրությամբ վերստին ներկայացվել է վարչապետի աշխատակազմ: Օրենքի նախագիծը հանվել է տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստի օրակարգից և վերադարձվել՝ ՏԿԵ և ԿԳՄՍ նախարարությունների հետ լրացուցիչ քննարկման և լրամշակման նպատակով:		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ
		2. «Ապագա առաջնորդների ներգրավում, երիտասարդների համար հարմարվողականության	Ավարտված աշխատանքներ • Խորհրդատվական հանդիպումների անցկացում ավագ դպրոցների աշակերտների և ոլորտում ճանաչված անձանց հետ,		2021-2023թ.թ. նոյեմբերի

	ակադեմիական ու գիտական ոլորտների հետ	հիմնախնդիրների և լավագույն փորձի վերաբերյալ թվային կրթական մոդուլի ստեղծում» ծրագրի իրականացում	• Խաղաֆիկացված թվային կրթական մոդուլի բետա (թեստային) տարբերակի մշակում, • Խաղաֆիկացված թվային մոդուլի բետա տարբերակի բովանդակության, ընդհանուր գրավչության և տրամաբանության, ինչպես նաև՝ օգտվողների շրջանում ըմբռնողականության աստիճանի հստակեցման նպատակով կարծիքների հավաքագրում և վերջնական տարբերակի հստակեցում, • Ծրագրի շրջանակներում մշակվելիք եռալեզու բջջային հավելվածի (iOS և Android հարթակների համար) տեսլականի սահմանում և ներկայացում պատվիրատուին, • Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման և իրազեկվածության մակարդակի բարձրացման աշխատանքներ: Շարունակվող աշխատանքներ • «Հարմարվողականության փորձարարական լաբորատորիայի» միջոցառման կազմակերպման մրցույթի ամփոփում, հաղթողի հետ պայմանագրի կնքում, • Ծրագրի շրջանակներում մշակված բրաուզերային խաղի հիման վրա եռալեզու բջջային հավելվածի (iOS և Android) ստեղծման աշխատանքներ, • Էկոկրթական բրաուզերային խաղի փորձարկման աշխատանքներ:		3-րդ տասնօրյակ